

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի կամարագրության մէջ:

Կարագրագրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусака“

ՄԱԿ

Կամարագրությունը բաց է առաջին 10—2 ժամ
(Նախը կիրակի և տոն օրերին):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունները համար վճարում են
իրաքանից բաժին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է հասկանաք: — Ներքին տեսու-
թիւն: Նամակ Շուշուց: Նամակ Նախագրին: Ներ-
քին լուրեր: Արտաքին տեսու-թիւն: «Po-
lit. Corresp.» լրագրի թղթակցութիւնը: Թիֆլիս:
— Մշակիչ հեռագիրներ: Յայտարարութիւններ:
Բանասիրական: Միջին երբ:

ԴԵՏԲ Ե ՀԱՍԿԱՆԱԲ

Յարուցանելով «Մշակի» վեր-
ջին համարներում այլազան հա-
յերի ազգի հետ միանալու խն-
դիրը, մենք բոլորովին նպատակ
չունենք կրօնական խնդիրը
յարուցանելու, այլ նայեցինք խնդ-
րի վրա բուն ազգային տեսակե-
տից:

Մենք ոչ լուսաւորչականներին
ենք քարոզում թողնել իրանց կր-
օնը և ոչ էլ բողոքականներին
ու կաթոլիկներին ենք քարոզում
թողնել իրանց կրօնը և լուսա-
ւորչական դառնալ...

Մեզ համար նոյն է ինչ կրօնի
կը պատկանի այս և այն հայը,
մենք գործ չունենք հայի ներքին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՆՁՆԻ ԵՐԲ

Ժամանակը և ժամանակակից պահանջները յա-
րուցանում են ժողովրդի գործիչների մէջ նոր մը-
տածութիւններ, նոր գաղափարներ, որոնք առաջ
են գալիս իրերի անհրաժեշտութիւնից, և աւելի
ճիշտ ասած, ներկայի ծնունդն են: Դոր մտածու-
թիւնները, նոր գաղափարները կարող են խորթ,
օտարութիւն մինչև անգամ վնասակար երևնալ այն
անձանց, որոնք ժամանակի պահանջներին չեն հե-
տևում, որոնք անշարժ մնում են հին նախապա-
շարժութիւնների վրա:

Ազգայնութեան գաղափարը վաղուց անձանց
էր մեզ հայերիս. դեռ ներկայ դարուս երկրորդ
կիսաբաժնի մէջ նա սկսեց արծարծվի մեր մտա-
ծողների գլխում, բայց այնքան ազատ և այնքան
խառնափնթի կերպով, որ մի որոշ կերպարանք ըս-
տա՛նալ չը կարողացաւ: Ամենաճիշտ և ամենաան-
կեղծ ազգայնականը չի թողնում էին ազգը կրօնի
հետ և կրօնը եկեղեցու հետ: Եւ եկեղեցուց բա-
ժանված անդամների վրա նայում էին, որպէս հե-
թանախների վրա և նրանց այլ ևս հայ չէին համա-
րում: Հայեր համարվում էին նրանք միայն, որ
պատկանում էին լուսաւորչական եկեղե-
ցուն: Եւ այսպէս, ազգութիւնը և եկեղեցին կազ-
մում էին մի անբաժանելի միութիւն, որի ան-
ջատում, նրանց կարծիքով, կարող էր պատճա-
ռել երկուսի էլ մահացութիւնը:

Բայց այդ դրութիւնը երկար չէր կարող պահ-
պանվել. նա ոչ միայն անբնական էր, այլ հակա-
ռակում էր ազգերի յառաջադիմութեան օրէնքնե-
րին: Անկարելի էր, որ հայ ազգը պատկանէր

համոզմունքների, գործ չունենք
կրօնական խնդիրների հետ: «Մշ-
ակը» հասարակաց օրգան է, նրա
նպատակն է դառնալ ընդհանուր
հայոց պաշտպան, հայոց շահերի
ընդհանուր օրգան, միջոց տալ բոլոր
հայ համայնքներին, ինչ կրօնին և
պատկանեն հայերը՝ յարուցանել,
յուզել, բացատրել իրանց հասա-
րակական, ուսումնական, տնտեսա-
կան խնդիրները:

«Մշակը» հասարակաց օրգան
է, նա աստուածաբանութեամբ չէ
պարապում: Մեզանից հեռու է,
մեր գործ չէ քննել թէ կրօննե-
րից ո՞րը աւելի լաւ է, ո՞րը աւելի
վատ է: Մեզ համար բոլոր կրօն-
ները հաւասարապէս լաւ ու օգ-
տաւէտ են: Մենք կրօնի և խղճի
հաւասարութեան և ազատու-
թեան պաշտպան էինք և միշտ
կը լինենք:

Թող ամեն հայը դաւանի այն
կրօնը որի մէջ ծնված է, որին
համակրում է, բայց թող բոլոր
հայերը ազգային տեսակետից մի-
մեանցից չանջատվեն կրօնի տար-

բերութեան պատճառով և ձուլ-
վեն ի մի ազգութիւն՝ ազգա-
յին ընդհանուր ձուլարանի մէջ,
կապված լինելով ընդհանուր հայ-
րենիքի և մայրենի լեզուի միջոցով:
Մենք երբեք ոչ մի կրօնի էութե-
թիւնը չենք քննել և երբեք չենք
քննի, բայց երբ ժամանակը կը գայ՝
մեր մտքերը կը յայտնենք, ինչպէս
անցեալում շատ անգամ յայտնել
ենք, եկեղեցու արտաքին վերա-
նորոգութիւնների անհրաժեշտու-
թեան վրա:

Կրօնը ներքին հաւատ է. կրօնը
ուրիշ բան է, եկեղեցու հիմնա-
կութիւնը ուրիշ բան:

Կարելի է հարկաւոր ժամանակ
վերանորոգութիւններ առաջարկենք
եկեղեցու արտաքին ձևի, տնտե-
սական և վարչական կազմակեր-
պութեան մէջ, առանց յանդգնելու
կրօնի էական մասերին դիպչելու:

Բայց այժմեան մեր յօդուած-
ների շարքի նպատակն է միմիայն
հասարակական ազգային խնդրի
յարուցանելը, աւելի ոչինչ:

Գ. Ա.

Հում, դուր զարձակ մեր անբաժան եղբայրներն
էք և մեր ազգի սիրելի անդամներ:

«Մշակը» իր հրատարակութեան հէնց առաջին
տարիներից, մեր աղաքաւան եղբայրների վերա-
բերութեամբ, ընդունեց վերջին եղանակը: Այդ,
ի հարկէ, կը վրդովեցնէր շատերին, որոնք աւելի
բարեւ չէին համարում, որ հազարաւորները և բիւ-
րուրները մեր ազգից կորչին, քան թէ լուսա-
ւորչական եկեղեցու մի աղիւսը իր տեղից խախ-
տվէր:

Բայց հարցը շատ պարզ էր, թէ և ոմանք չը հա-
կանալով, և ոմանք չարամտութեամբ աշխատում
էին և աշխատում են աղաքաւան բացատրել: Քարո-
զել այն միտքը, թէ մեր կաթոլիկ, բողոքական,
յուդադաւան և միջին անգամ մասնաշաղկապ եղ-
բայրները մեզ նման հայեր են, մեր միջև և մեր
արեւմտիկներն են, և մեր ազգութեանն են պատկա-
նում,—այդ չէ նշանակում մի վնաս լուսաւորչա-
կան եկեղեցու գործելու: Լուսաւորչական եկեղեցին
մեզ համար նորմալ սուրբ է, որքան սուրբ են և
միւս եկեղեցիները իրանց պատկանող անդամների
համար: Մենք չենք կարող, և մինչև անգամ իրա-
ւունք չունենք ասելու նրանց, թէ փոխեցէք ձեր
կրօնը, կրկին մտէք մեր եկեղեցին, այն ժամա-
նակ միայն մենք եղբայրական ձեռք կը մեկնենք
ձեզ և կը համբուրվենք ձեզ հետ: Դրանով մենք
իրաւունք կը տանք նրանց նոյն պահանջել մե-
զանից: Եւ այսպէս ազգային միութիւնը երբեք
չի կայանայ:

Ո՞վ է հերքում այն փաստը, թէ լուսաւորչական
եկեղեցին պատմական կապ ունի մեր ազգայնու-
թեան հետ: Ո՞վ է հերքում, որ այդ եկեղեցին
շատ զեպեղբում ազատել է մեր ազգութիւնը կո-
րստից և շատ զեպեղբում են վնասել է նրան:
Այստեամենայնիւ, մենք կը պաշտենք այդ եկեղե-
ցին, և եթէ նա դարեւր ընթացքում ստացել է այս
և այն խորթ ներմուծութիւն, կաշխատենք ինք-
ներս ուղղել, առանց թող տալու մի օտարի մի-
ջամտութիւնը: Մենք մեր տունը մեր ձեռքով կը

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԿ ՇՈՒՇՈՒՑ

յուլիս 1

Պ. Աբէլ Ապրեսեանցի «Մշակի» 107 համարում
տպած թղթակցութեան մի քանի սխալները ուղ-
ղել ես ինձ պարտք եմ համարում ընթերցողների
առաջ, ոչ թէ չուչեցիների անտարբերութիւնը ալ-
դարացնելու, այլ ճշմարտութիւնը պաշտպանելու
նպատակաւ: Պարոնին, ինչպէս երևում է, յայտնի
չէ, որ հասարակական գրատուն բանալու համար,
բացի փողից, աշխատող մարդկերանցից, համա-
կրութեանց և այլն, ուրիշ, ոչ պակաս ծանր՝ ար-
գելքներ էլ կան, որպէս կառավարութեանց թոյ-
լատրութիւն (разрешение) ստանալ, հասարակական
վճիռ (мировое приговоре) հաստատել, կանոնա-
դրութիւն չինել և յարմարացնել ժամանակակից
պայմաններին և այլն, որ դո՛ւք վրա չառ և շատ
ժամանակ և աշխատանք է խաղճվում:

Բացի դրանից, հիմնադրի անդամների թիւը ոչ
թէ վաթսուս է, այլ ութսունից աւելի, որոնք
համաձայնվել են իւրաքանչիւր տարի տասը ռուբ-
լի վճարել ընթերցանութեան համար (այլ ոչ փքր
նուիրատուութիւններ, ինչպէս հասկանում է պ.
Ապրեսեանցը), ուրեմն ժողովուրդային 800 ռուբլի:
Անդամներից համարեա կէսը արդէն վճարել է իր
վարձը, իսկ մնացածի մեծ մասը ուրախութեամբ
կը տայ, եթէ մասնաժողովը հարկաւոր համարի
պահանջել: Պէտք է գովել հիմնադրի անդամներին,
որոնք լաւ ծանօթ չը լինելով պ. թղթակցի պէս
այդ արգելքների հետ, մինչև այժմ լուրում են և
համբերում, բացի մի քանի անդամներից, որոնք
ձանձրանալով վերջապէս յետ են պահանջում ի-
րանց փողը, ի հարկէ, խոտառնալով նորից վճարել,
եթէ գրատունը գոյանայ: Պարոնին կարող եմ
հաւատացնել, որ այդ անտարբերութեան պատ-
ճառը մենք ենք, գոնէ այդ գործի մէջ, որ մեր

նորոգելը, եթէ հարկաւոր կը համարվի: Բայց մի
և նոյն ժամանակ կը պահանջեն կատարեալ նե-
րողամտութիւն դէպի մեր այլազան ազգայնա-
ններ, և առանց վերաւերելու նրանց կրօնական
զգացմունքը, կաշխատենք հակացնել նրանց, որ
մենք մի և նոյն ազգի դաւաններ ենք, որ մեր ընդ-
հանուր շահերը պահանջում են ազգային սերտ մի-
ութիւն, և ամեն ինչ, որ հակառակ է այդ միու-
թեանը, պիտի, վնասակար և անսիրելի է:

«Մշակը» խօսելով կրօնի մասին, միշտ ազգային
կէտից է նայել նրա վրա: «Մշակը» կրօնափոխու-
թիւն չէ քարոզում, ո՞վ որ այսպէս է մտածում,
նա կամ կոյր է, կամ խաղաղութեամբ լի չա-
րամիտ: Եւ եթէ «Մշակը» իր էջերը բաց է արել
Ամիրխանեանցի, Նիքոլոսեանցի և Մարկոսեանցի
առջև, այդ չէ նշանակում, թէ նա դառնում է
գործիք դանազան արքայի դէմ: Դեռ քան, որպէս
սխալում են ոմանք: Մի լրագիր, որ իրան
նպատակ է դրել հաշտարար լինել ազգի անջատ-
ված, թշնամացած և խորհրդացած անդամների մէջ,
նրա պարտքն է լսել և հրատարակել իւրաքանչիւրի
խօսքը: «Մշակի» մէջ կարող են գրել, որպէս
լուսաւորչական, այնպէս էլ կաթոլիկ, բողոքական,
մասնաշաղկապ և յունադաւան հայերը,—նա ազ-
գային օրգան է և ոչ եկեղեցական:

Մենք Ամիրխանեանցիներին և դրանց նմաններին
ազգի թշնամի չենք համարում. մենք ազգի թշնամի
ենք համարում այն զոռեկի հայերին, որ հայերէն
չեն խօսում, որ հայերէն չեն կարողում, որ Հայաս-
տանի վրա չեն մտածում, և միայն տարին մի քա-
նի անգամ հայոց եկեղեցին մտնելով, հայ քահա-
նայի ձեռքից հաղորդութիւն են ընդունում և դը-
րանով իրանց բոլոր պարտքը կատարած են հա-
մարում: Մենք ազգի թշնամի ենք համարում այն
կարճամիտ ազգայնականներին, որ լուսաւորչական
եկեղեցուց դուրս հայ չեն ծանաչում: Ի՞նչ կը
լինէր այդ վերջինների կարծիքով, եթէ հայերի
մեծ մասը մի ժամանակ բողոքական կը դառնային,
կամ մի ուրիշ կրօն կընդունէին, իսկ ազգի փոք-

ԻՐէ/Խրդադէ

իսկ մնացողները պարտաւոր են դրամական օգնութիւն հասցնել: Այդ վճառից յետո՛ւ ժողովին ներկայ եղողները ուղեւորվեցա՛ն սուլթանի պալատը, որպէս զի յայտնեն նրա իրանց հայրենասիրական վերաբերմանը, բայց սուլթանին աղիւտատեմը շուտով հասաւ և արգելեց ամբողջին իրազօրեմը իր մտադրութիւնը որովհետեւ մի կողմից սուլթանը չէ սիրում որ իր պալատի առաջ ամբողջ հաւաքվի միւս կողմից նա չէր կարող բացարձակ քաջալերել այբանցիներին: Կ. Պօլիս նորերում հասած Աբեդգիւն-փաշայի եղբայրը ներկայ էր այդ ժողովին և շուտով ուղեւորվեցաւ ինչպէս պատմում են, Սկուտարի գաղտնի յանձնարարութեամբ: Այդտեղ նա կը տեսնէր չորս անուանի այբանցիների հետ, որոնցից իրեկուսը մահմետական, մի կաթօլիկ և մի ուղղափառ քրիստոնէայ է և որոնց հետ միասին կուղեւորվի Հռոմ Հռոմբերտ թագաւորին ներկայանալու համար: Բացի այդ վերջին ժամանակներում Աբեդգիւն-փաշան իտալական դեսպան կոմս Կորտի շուտ շուտ գաղտնի խորհրդածութիւններ են ունենում: Այբանցիները այստեղ բացարձակ զինւորներ են հաւաքում: Իւրաքանչիւր մարդ թիւրքական մի լիբա է ստանում և առանձնաշնորհներ ճանապարհի համար: Այբանցիները զխաւորապէս Յանիւա են ուղեւորվում, որտեղ մահմետականների և յոյների մէջ կռիւ է սպասում: Յուլիս 5-ին «Ասկիթ» լրագիրը խորհուրդ էր տալիս իրազօրեմը Զերնօգորիայի հետ ապրիլի 12-ին կապած դաշնագրութիւնը, որովհետեւ նա կայացել է Խալիլայի միջնորդութեամբ: Այբանցիներին խորհուրդ է տալիս չընդդիմանալ այդ դաշնագրութեանը և անօգուտ կերպով չը թափել այբանական արիւնքը և չը բաժանել այբանական ոյժերը, որոնք հակաւոր են թիւրքաց կայսերութեան կենսական շահերը պաշտպանելու համար: Այբանական առաջնորդներին մէկը խորհուրդ է տուել թիւրքաց կառավարութեանը բողոքովին չը խառնվել նրանց գործերի մէջ, որովհետեւ ինքը միութիւնը կարող է իր գործերը կարգադրել: Սուլթանը որ գնահատում է իր հեղինակութիւնը, չը հաւանեց այդ խորհուրդը: Մի և նոյն պատճառով սուլթանը չը հաւանեց Աբեդգիւն-փաշայի կազմած վերանորոգութիւնների նախագիծը Հայաստանի համար և վերջը նրան բողոքովին մերժեց: Այդ էր պատճառը, որ Բ. Դրան պատասխանը դեսպաններին հայոց խնդրի վերաբերութեամբ բաւական ուշացաւ: Սուլթանը չէ կամենում Հայաստանին առանձնաշնորհութիւններ տալ և կարծում է, որ եւրօպական մասնաժողովի մշակած նախագիծը նահանգական վերանորոգութիւնների համար, բաւական է Հայաստանին: Բ. Դրան տուած պատասխանը դեսպաններին այդ բովանդակութիւնն ունի: Հաւատացնում են, որ սուլթանը ինքը բացատրեց պ. Դօշնին իր այդ հայացքի պատճառները, որոնք հակառակ են պետութիւնների պահանջին, որ Հայաստանին բացառական դրութիւն տրվի: Սրանից յետոյ կարելի է հասկանալ թէ ինչն էր դրդում թիւրքաց կառավարութեանը անդադար հեռագիրներ հրատարակել, իբր թէ Հայաստանի մէջ ամեն բան հանգիստ է և կարգի է բերված:

Յստեղ հասնելուց յետոյ նրանք իսկոյն հրաւիրեցին իրանց մօտ անուանի յոյներին, թէ վիլայետի մայրաքաղաքից և թէ շրջա- կաներից երկու երկու մարդ և մանրամասնա- բար հարցրին նրանցից երկրի դործերի մա- սին և նոյնպէս նրա մասին, թէ Էպիրոսի միացնելը Յունաստանի հետ արդեօք նրանց ցանկութիւնների համեմատ է, թէ ոչ։ Պատասխանի մասին անկարելի էր երկարել։ Նրանք ամենքը պատասխանեցին, որ իրանց երկրի միացնելը Յունաստանի հետ վիլայետի բոլոր բնակիչների ամենաջերմ ցանկութիւնն է կազմում։ Բայց անգլիացի օֆիցերները չը կամեցան կողմնապահ լինել և հրաւի- րեցին իրանց մօտ չորս անուանի թիւրքե- րին, իւրաքանչիւր քաղաքից երկուսին և պաշտական տարրից։ Էպիրոսի քաղաքները ներկայացուցիչները Խէյրէզին-փաշա և Մուս- տաֆա-բէյ էին, իսկ ալբանցիները կողմից յայտնի մոլեռանդ Աբդուլ-բէյ Ֆադարլիս և Նակի-բէյ։ Բրիտանական օֆիցերները նրանց էլ մանրամասնաբար հարց ու փորձ արին և յետոյ հարցրին, թէ նրանք ինչ- պէս կը վարվեն, եթէ սուլթանը մի լրա- բեր կուղարկի և կը յայտնի, թէ յիշեալ երկիրը գիծած է Յունաստանին։ Թիւրքերը պատասխանեցին, թէ այդ լրաբերին նրանք իսկոյն կը սպանեն, որովհետեւ թիւրքերը վճռել են գլխովին ջարդվել, քան թէ թոյլ տայ, որ Էպիրոսի գոնեա մի մասը Յունաս- տանի հետ միանայ։ Վերջը թիւրքերը խո- րեցին օֆիցերներին, որ նրանք իրանց այդ վճռողական պատասխանը հասցնեն անգլիա- կան թագուհու կառավարութեանը։ Մնչկե- երևում է անգլիացի օֆիցերները ստացել են նոյնպէս պատերազմական յանձնարարու- թիւններ, որովհետեւ նրանք մանրամասնա- բար քննում են թէ այստեղի ամրոցը և թէ հարևան պատերազմական ամրացած դիր- քերը։ Ալբանցիները և առհասարակ մահ- մետականները, տեսնելով, որ Բերլինում ոչ թէ միայն որոշեցին յոյն-թիւրքական նոր սահմանները, այլ և Յունաստանին տուին Պրիզակա և Նանիա, շատ անհանգիստ են եղել և ընդգրկմանալու համար գործ են ածում բոլոր միջոցները։ Ալբանիայի իւրա- քանչիւր գիւղը հեռագիր և ուղարկված և օգնութիւն է խնդրված։ Հաստատ աղբիւ- րներից տեղեկացայ, որ Ալբանիայի բազմա- թիւ դիւղերից խոստացել են անյապաղ օգնութիւն հասցնել։ Ն/Թ է մեծ պետու- թիւնները դրականապէս չեն իրադործի Բերլինի կոնֆերանցիայի վճիռը, Յունաստանը իրան յատկացրած երկիրները կարող է ատուակ միայն մեծ արիւնհեղութեան գնով։ Նոյն լրագրին գրում են Լոնդոնից։

Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները իրանց մէջ բանակցութիւններ են սկսել, թէ ի՞նչ միջոցներ պէտք է գործդնել իսնջերեկային վիճիւնները իրագործելու համար: Նաւատորմների թիւրքաց ջրեր ուղարկելու ոչինչ չի օգնի, որովհետեւ վերջին տարիների փորձից երևաց, որ օտար պետութիւնների նաւատորմների ներկայութիւնը Գարբանելի մէջ բաւական չէ Բ. Թրանը խելքի բերելու համար: Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները սկզբունքով համաձայն են նաւատորմներ ուղարկելու մասին, բայց մի հարց է բարձրանում ի՞նչ պէտք է անել, եթէ այդ միջոցը անգործնական կը լինի և ոչինչ ազդեցութիւն չի ունենայ թիւրքաց կառավարութեան վրա: Թագաւորը չօգտւում յայտնել է անգլիական կառավարութեանը, որ յունական զօրքերը իրանք կը գրաւեն Յուսասանին տուած երկիրները, եթէ Թիւրքիան նրանց կամաւորապէս չի տայ, բայց յայտնող մի կողմից կասկածում են, որ յունական զօրքերը կարողանան յաղթել թիւրքաց զօրքերին և արլանջիներին, միւս կողմից պետութիւնները իրանց արժանաւորու-

Թիֆլից ստոր կն համարում, որ Յունաստանը ուժով դրա է այն երկիրները, որոնք իրանց վճռով սուած են նրան, մանաւանդ թող տալ Յունաստանին յաղթվել: Այնուամենայնիւ ոչ մի պետութիւն չէ ցանկանում իր գոյրելը Թիւրքիա ուղարկել: Թէպէտ անգլիական մինիստրութեան մի բանի անդամներ ցանկանում են անգլիական զօրքեր ուղարկել, բայց հասարակարան կարծիքը դրա դէմ է և և թէ աշդպիսի մի կարգադրութիւն առնուի, Պադետօնի մինիստրութիւնը կը վնասվի: Պետութիւնների ընդհանուր դրութիւնը դեռ ևս յանձնված չէ Բ. Դրանք: Ինչպէս երևում է առժամանակ եւրօպական կառավարութիւնները մասնաւորապէս բանակցում են թիւրքաց կառավարութեան հետ: Դոնեա Վիէնայի «Polit. Corresp.» լրագիրը աշդպիսի տեղեկութիւն է ստացել Աթէնքից: Եթէ հաւատանք այդ տեղեկութեանը Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները Աթէնքում առաջարկել են յունական զինուորական մինիստրին առժամանակ դադարեցնել պատերազմական պատրաստութիւնները, որպէս զի Բ. Դուռը առիթ չունենայ մերժել պետութիւններից նրան առած առաջարկութիւնները: Աթէ ձմարիտ աշդպիսի առաջարկութիւն արած է, դրանից երևում է, որ պետութիւնները յոյս ունեն դործը խաղաղութեամբ վերջացնել և կամաւորապէս ստանալ Թիւրքիայից այն երկիրները, որոնք կոնֆերենցիայի վճռի համեմատ Յունաստանին են վիճակված:

Այնուամենայնիւ պէտք է ի նկատի ունենալ, որ Թիւրքաց կառավարութեան ատեհեւ համաձայնութիւնը անկարելի չի դարձնի այն պատահարները, որոնց պատճառով Ռուսաստանը պատերազմական պատրաստութիւններ էր տեսնում: Բ. Դուռը կարող է տալ իր համաձայնութիւնը, բայց մի և նոյն ժամանակ զործ դնել Նւրսպային արդէն յայտնի այն միջոցները, որոնք անկարելի կը դարձնեն զիջած երկիրների յունական գոբերով զբաւելը առանց արիւն չեղով թեան: Այս հանգամանքը այնքան լաւ յայտնի է որ հազիւ թէ մասնաւոր բանակցութիւնների նպատակը Բ. Դրան համաձայնութեան տրանսլը լինի: Այդ բանակցութիւնները նշանակով թիւն կունենան միայն այն ժամանակ, երբ պետութիւնները կը ստիպեն Թիւրքիային զործնական միջոցներ գտնել Ռուսաստանին զիջած երկիրները յանձնելու համար:

Այս ղեկըրում անսպասելի է, որ Կ. Պոլսի կառավարութիւնը համաձայնի իր վրա առնել պահանջած պարտաւորութիւնը: Այդ համաձայնութիւնը չափազանց կը զրգռէր սուլթանի ֆանատիկոս հպատակներին: Այդ գործը կտրելի եղաւ Բաթումը ռուսներին յանձնելու ժամանակ, բայց պէտք է ի նկատի ունենալ, որ սուլթանի մահմեական հպատակները լաւ իմանում էին, որ Ռուսաստանը կարող է եւ միջոց ունի պատժել Թիւրքիային, եթէ նա իր պարտաւորութիւնը կատարէ: Կոնֆերենցիայի վճռի համեմատ Յունաստանին տուած երկիրները գրաւելու ժամանակ գործը բոլորովին ուրիշ երկպառանց կը ստանայ, եթէ պետութիւնները ճշնող միջոցներ չեն գործ զնի, օրինակ եթէ նրանք իրանց զինուորական նաւատորմները չեն ուղարկի այն ջրերը, որոնք կից են Յունաստանին զիջած երկիրներին: Յանկայի ըն լինէր իմանալ, որ պետութիւնների մասաւոր բանակցութիւնների նպատակն է սուլթանից համաձայնութիւն ստանալ նաւատորմները Թիւրքաց ջրերը ուղարկելու համար:

«Голосъ» լրագրի առաջնորդող յօդուածի վերջ ասված է:

«Polit. Corresp. լրագրի ստացած հեռաբերը Աթէնքից մի ուրիշ կողմից էլ նշանաոր է: Յունական զօրքերի պատրաստու-

Թեև անհավանական է, որ Խրանսիական ղեկավարները: Խրանսից երևում է որ անհիմն են վերջին ժամանակներում տարածված այն բոլոր լուրերը, իբր Թե Խրանսիան չէ կամենում Բ. Դրան վրա գործնական ձևով անել: Յուճական հարցի մէջ Խրանսիան այլ ևս չէ կարող յետ մնալ մանաւանդ այն պատճառով, որ այդ հարցը ինքն է բարձրացրել և կոնֆերենցիայի որոշած սահմանները բոլորովին համեմատ են Խրանսիական նախագիծին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս ՊԵՏԵՐԳՐՈՒՐԳ, 10 յուլիսի: Պաշանտապէս
հրամայված է Ղարսի ու Բաթումի մէջ քա-
ղաքային երեք դասատուններով ուսումնարան-
ներ բանալ, իսկ Թեմիր-խան-Շուրայի պրոգիմ-
նադրան ընդարկան ուսումնարան դարձնել:

ՍՄԻՄ, 10 յուլիսի: Աբդուրախմանի տէ-
սութիւնը անգլիացիներէ հետ կրկայանայ
անգլիական բանակի մէջ Կարուլից 14 մղոն
հեռաւորութեամբ: Էյլաբ-խանի զօրքերը
հասան Գիլմենդ գետին, Գիրշկից 12 մղոն
հեռաւորութեամբ: Նրանց հետ միացան
փախստական շատ զինուորներ: Բերբաւ տե-
ղափոխեց իր բանակը Գիրշկին երեք մղոն
եւայ:

4 ՊՈԼԻՍ, 10 յուլիսի: Չերնոգորիայի իշ-
խանը Հրաժարվեցաւ ընդունել Բ. Դրան առա-
ջարկուածինը՝ նշանակել մանատորով ալբան-
իլներէ յարձակումը քննելու համար և պա-
ռուիւրեց Չերնոգորիայի հաւատարմատարին
Էուրս գալ Կ. Պոլսից:

4. ՊՈԼԻՍ, 11 յուլիս: Թիւրքաց միւս-
որների խորհուրդը այսօր ընդունեց Բ. Դրան
պատասխանը պետութիւնների ընդհանուր
ըրութեանը: Այդ պատասխանով / Բ. Դուռը
առաջարկում է պետութիւններին ընդունել
սկզբունքով, որ Լարիսաս, Նանիա, Մեցեկօ
հան Թիւրքիային և ինչորում է այդ ուղղու-
նամբ բանակցութիւններ սկսել: Ռուսաց
ռեպան Նովիկով պահանջեց Վելի-Մահմեդի
հաշուան պատժի:

1,05105, 11 յուլիսի: Պաշտօնապէս հա-
որդեալ են, որ Աբդուրահման էմիր է յայ-
նկաժ:

Վիեննա, 11 յուլիսի: Բոլոր պետութիւնա-
երից համաձայնութիւն է ստացվել զինուոր-
ած ցոյցեր գործել թիւրքաց ամերի վրա
թէ Բ. Գուռ պետութիւնների ընդհանուր
բութեանը բացասական պատասխան տայ:
Իովլյին ցոյցերի պատճառը կը լինեն յունա-
ան և չերոսօքորիական հարցերը: Սերբիայի
Ժազուհին վտանգաւոր կերպով հիւանդ է:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԻ, 12 յուլիս: Զինական
և սպանատունը Պետերբուրգի մեջ մարկիզ
զենգիզ պաշտօնական տեղեկութիւն ստա-
աւ, որ նա կը հասնի Պետերբուրգ եկող
արաթիսյ լերջին:

Ա. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 12 յուլիսի: Պետական բան-
կի 5% տոմսակը առաջին շրջանի արժե-
48³/₈ ռ./, երկրորդ 92¹/₈ ռ., երրորդ 93 ռ.,
0 կ., չորրորդ 93 ռ., ներքին 5% առաջին
ոխանութեան տոմսակը արժե 223 ռ.,
0 կ., երկրորդ 223 ռ., արևելեան առաջին
ոխանութեան տոմսակը արժե 91 ռ. 75, կ.,
երկրորդ 91³/₈ ռ., երրորդ 91¹/₈ ռ., ոսկի 7 ռ.
7 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժե
5³/₈ պենս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա
16 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆր.
5 սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը
անցիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունում եմ իմ տան բոլոր ծախիւք, միջակ վճարով, ծննդական կանանց, նոյնպէս և այնոցիկ կանանց որոնք ունեն կանայի հիւանդութիւնը: Պահպանութիւնն և նկատողութիւնն յատկապէս իմով հսկողութեամբ և անմիջապէս օգնականութեամբ հմուտ բժշկի. ի տան Կարապետի յ. 24. Ի Սաբերին փողոցի վրա.

Ա. Կուշերկա Մ. Ֆիլչակով.
2—2 (1)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳԼԽԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արծրունու զանազան մէջ: Գուլպաներ (տղամարդկերանց և կանանց), թաշկինակներ, պարուսիւն, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, բէլովերներ, կողպէքներ, սղոցներ, զանազան, զգալիներ, ցիտրուս-մաղնիգիա ծառաւից և այլն. այժմ ծախվում են 25%-50% էժան քան թէ ուրիշ տեղ: 3—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն զնով 1 ռ. 10 կ., 1 ռ. 20 կ., 1 ռ. 40 կ., 1 ռ. 60 կ., 1 ռ. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանկ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 ռուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ռ. ծախվող թէյի հետ:

31—100

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇՒԱՊԱՀ

Որ նորերում է եկել, ցանկանում է տեղ աւելնայ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից մնացած տարեկան ՀԱՇՒԱՊԱՀԻ կազմէ և թողած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԲԵՐ և ԲԱՆԱՆՏԵՐԸ կարգի բերել: Հասցեն թողնել Փարիզ հիւրանոցում № 4:

10—10

ՄՕՁԴՈՒԹԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐՓՈՒՆԻ նպատաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿ» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

10—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ՄՈՒՐԻՆՕՎԻ և ընկ ղեկերի ԽԱՆՈՒԹՈՒ և ՊԱՀԱՅՈՒՆ կը լինի ԽՆՏԱՐՈՎԻ տանը, Շաբուրովի տան ԿԻՑ, որտեղ գտնվում է նահանգական վարչութիւնը Մուգէու մի զինամը:

3—3

Շուտով մամուլի տակից դուրս կուգան Ս. Մանգրիկանի հետեւեալ աշխատութիւնները.

Ա. զգային ընտանեկան աշխարհք. 1-ին տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ա. զգային դիւցազնական աշխարհք. 2-րդ տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նահապետական աշխարհք և հայրենիք. 3-րդ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

1—5

ԱՆԳԼԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օրհորաֆրական պատկերներ 20% զեղումով: վերաբերում են 6—70 ռ., խողանակներ պահպանողները են լինի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենաբարձր են լինի 4 ռ., նեֆրիտի զանազաններ 3—20 ռ. դիւթիւնը, բրնձանական մետաղի թէյամաններ 30 կ.—3 ռ., ցիտրուս-մաղնիգիա, թիւրքական շերտէթ և ծառաւից Բագնիստի յիւթ 70 կ., ամենալաւ պորտփէյն և խերես 1 ռ. 40 կ. շիշը, շամկայի 3 ռ. շիշը:

20—20

ԳԵՐԱԶԱՆՑ ԱՆԻՐ 2-րդ 860ԱԿ

Պատաստված մաքուր ցորենից առանց թեփիւր բերված է նյակից և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, նիւզապետիսի փողոց, տուն Բանաօվի, Փոթի-Թիւրքիսան երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս նյակից բերած և Փոթիում պահվող 5000 պուդ մաքրված զարի:

5—5 (2)

ՄԵԿԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՈՐԻՆԻ ԳՈՐԾԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակ» խմբագրութեանը:

ԲԺՅԱՆՈՑ

ՀԻՄԱՆՈՒՄԻ ԲՆԳՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՐՈՏԵԱՆ 9-18 ՄԻՆՁԵՐ 1 ՃԱՄԸ:

Նրկուշ ԲԺԻ. Գալթոնի կանանց հիւանդ. Գորալի վիշ ներքին հ., Բոտինի անց կանանց և երեխաների հ., Բիւլաւ-րե անց խրուրդական և աչքերի հ., Գտեմբորսի վիշերական և կաշու հ., Բարայե անց ջրային և հոգեկան հ.:

Նրեքշ ԲԺԻ. Միւնիսի վիշ խրուրդական հ., Վգորով վիշերական և բողազի հ., Բէյլաւ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնոգլէն աչքի հ., Լիսիցի վիշ և Վիւմիշ վիշերին հ.:

Չորեքշ ԲԺԻ. Լիսիցի վիշ Բոլգովովի վիշերին հ., Գտեմբորսի վիշերական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւններին:

Հինգշ ԲԺԻ. Վգորով վիշերական և բողազի հ., Բոտինի անց կանանց և երեխաների հ., Լիսիցի վիշ և Վիւմիշ վիշերին հ., Բիւլաւ-րե անց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ ԲԺԻ. Գալթոնի կանանց հ., Միւնիսի վիշ խրուրդական հ., Կրասնոգլէն աչքի հ., Լիսիցի վիշերին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Գտեմբորսի և Աստուածատուրով վիշերական և կաշու հ., Բարայե վիշերական և ներքին հ.:

Շաբաթ ԲԺԻ. Լիսիցի վիշ և Վիւմիշ վիշերին հ., Բարով կործերի հ., Եանկովի վիշերական և կաշու հ.:

Բացի այդ բժշկ. Վգորով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժշկ. Բարայե վ. չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին երկրորդական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեւկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբիստ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցի:

Մ Շ Ա Վ Յ Գ Ո Ւ Ր Ս Ե Կ Ա Ւ Հ Ր Ս Տ Ա Ր Ա Կ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԵՐՀԱՆՈՒԹԵԱՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄՈՆՆԵԱՆՑԻ: Ե. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է թիֆլիզի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է 35 կոպ. Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է 60 կոպ. զուամբով առնողներին գիշումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻ մասը բաղադրական:

5—20

Վ Ո Ձ Վ Գ Վ Գ Ս Ն Ո Ս Ո Ր Չ Ո Ւ Ո Յ Ե Վ Ո Ձ Ո Վ Ի Ս Կ

Աղեքսանդրապոլու երկսեռ դպրոցաց բարձր դաստանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների հոգաբարձութեանց:

Հոգաբարձուր { Սարգիս Միրզայեանց.
Լսատուր Խահակեանց.

Բաղադրային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով զրկած, արվում են քաղաքային վարչութեան հերթակալ անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդրքի հետ պէտք արվին մեարիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մանող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամբողջ կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մանուկ համար նրանցից պահանջվում է. Կրօնից-բրիտանիական վարդապետութեան կարճատեւ հրահանգները և սրբազան պատմութիւն, ուսաց լեզուից-կարդալ, գրել և կարգացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուրքական լեզուից-առաջին 4 զործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կէսքի և այլ չափերի գիտեանալը:

Յունիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱՅԱՆ ՊԵՏԱԴԱՐԱՆՈՒՄԻ կից կը բացվին ՍԵՆՏԱԿԱՆ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՏԷ, ՇՕԿՈՒՄ, ԹԵՑ և պատրաստված հանքային զանազան բձրե:

23—40

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է 2-րդ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում: Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (հայրենագիտութեան թիֆլիսի) 5 պատկերներով Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Գինն է 35 կոպ. զուամբով առնողներին 20% զեղումն կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի մասն ուսումնական (մատենատիկական) և բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոյն գները: Սաք քաղաքացիք գիտնում են:

Въ Тифлисъ. Кавказская книжная торговля З. П. Грикурова. 20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Հրացաններ, բելովերներ, դանակներ, գրիւներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԱՅԱՆ ՄԱՐԿԱՆՈՒՄՆ:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухней, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.